



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐԺՈՒՅԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 11-ԻՆ ԵՎ ՀՈՒՆՎԱՐԻ 18-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 փետրվարի 2022թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

ՀՀ կառավարության ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր՝ 2022 թվականի փետրվարի 10-ի N 137-Ա որոշմամբ հավանություն է տվել Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագիրը վավերացնելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության օրենսդրական նախաձեռնությանը և որոշել է այդ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով դիմել Սահմանադրական դատարան:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2022 թվականի փետրվարի 11-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ նամակ-համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագիրը (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին՝ 51.428 մլն հատուկ փոխառության իրավունքին (այսուհետ՝ ՀՓԻ) համարժեք բյուջետային աջակցության տեսքով վարկ տրամադրելու նպատակով:

2. Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

– Պահուստային ծրագրի ներքո ստացված միջոցները մարել յուրաքանչյուր մասհանմանը հաջորդող 3.25-5 տարվա ընթացքում, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր մասհանում մարվելու է ութ հավասար եռամսյակային մարումներով՝ սկսած յուրաքանչյուր մասհանումից 3.25 տարի անց,

– վճարել ֆինանսավորման վճարներ (վարկավորման տոկոսադրույք), որոնք բաղկացած են՝ շուկայական ՀՓԻ տոկոսադրույքից, որն ունի նվազագույն՝ 0.05 տոկոսի շեմ և մարժայից (ներկայումս՝ 1 տոկոս) (միասին՝ բազիսային տոկոսադրույք), և հավելավճարներից, որոնք կախված են չմարված վարկի գումարից և ժամանակից,

– վճարել 2 տոկոս հավելավճար վարկի մնացորդի՝ քվոտայի 187.5 տոկոսը գերազանցող գումարի համար, իսկ եթե երեք տարի անց վարկը մնում է քվոտայի 187.5 տոկոսից բարձր, ապա վճարել այս հավելավճարը՝ բարձրացած մինչև 3 տոկոս,

– վճարել պարտավորության վճար Պահուստային բոլոր ծրագրերի ներքո ստանձնած միջոցների համար, որը գանձվում է յուրաքանչյուր 12-ամսյա ժամանակահատվածի սկզբում այն գումարների նկատմամբ, որոնք կարող են մասհանվել այդ ժամանակահատվածում (0.15 տոկոս՝ մինչև քվոտայի 115 տոկոսը չգերազանցող գումարների դեպքում, 0.3 տոկոս՝ քվոտայի 115 տոկոսից մինչև 575 տոկոսը, և 0.6 տոկոս՝ քվոտայի 575 տոկոսը գերազանցող գումարների դեպքում),

– վճարել 0.5 տոկոսի չափով ծառայության վճար յուրաքանչյուր մասհանված գումարի նկատմամբ:

3. Նամակ-համաձայնագրով սահմանվում է, որ պարտավորության վճարները համամասնորեն վերադարձվում են, եթե գումարները մասհանվում են համապատասխան ժամանակահատվածի ընթացքում: Այնուամենայնիվ, վերադարձ չի իրականացվում կանխարգելիչ Պահուստային ծրագրերի համար, որոնց ներքո երկիրը մասհանում չի իրականացնում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Արժույթի միջազգային հիմնադրամի միջև 2022 թվականի հունվարի 11-ին և հունվարի 18-ին ստորագրված «Պահուստային ծրագրի միջոցների օգտագործման մասին» նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

25 փետրվարի 2022 թվականի
ՍԴՈ-1636